ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/120

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից 05.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 05.12.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«1.1 «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ նաև պատվիրատու) կողմից հայտարարվել է ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգ:

1.2 ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով հրավերը հրապարակվել է 28.11.2018թ., ժամը՝ 13:38-ին:

1.3 Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 05.12.2018թ., ժամը՝ 14:00:

1.4 Աճուրդի կայացման օրը՝ 07.12.2018թ., ժամը՝ 14:00:

1.5 ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով հրավերի վերաբերյալ հարցում ուղարկելու վերջնաժամկետ է սահմանվել 03.12.2018թ., ժամը՝ 14:00:

1.6 ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով գնմանը մասնակցելու նպատակով «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ն հրավերի տեխնիկական բնութագրի առնչությամբ հրավերով և

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պարզաբանման նպատակով հարցադում է ներկայացրել պատվիրատուին:

1.7 Հարցադրումը ներկայացվել է 01.12.2018 թվականի ժամը 15:09-ին, 15:10-ին, 15:12-ին, 15:15-ին և 15:34-ին:

1.8 Հարցադրման վերաբերյալ պատվիրատուն տվել է պատասխան, որն ըստ էության չի անդրադարձել հարցադրմանը:

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:»:

2.2. Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ գնումների գործընթացի սկզբունքն է «գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:»:

Պատվիրատուին պարզաբանման նպատակով հարցադրում էր ներկայացվել ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրի 5-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների վերաբերյալ:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Նույն օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երկու օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք նույն օրը հրապարակվում են տեղեկագրում: Այդ դեպքում հայտերի ներկայացման վերջնաժամկետը հաշվարկվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հրապարակելու օրից:

Թեև Օրենքով և հրավերով հարցադրման և պարզաբանման համար սահմանված են հստակ ժամկետներ, սակայն պատվիրատուն պատճառաբանել է, որ օրենսդրի կողմից պարզաբանման համար սահմանված ժամանակը շատ կարճ է, հետևաբար՝ չի կարող պատասխանել մեր կողմից ներկայացված հարցադրմանը:

Օրենսդիրն օրենքներն ընդունում է համապատասխան ընթացակարգով և հետևաբար նրանցով սահմանված ժամկետները դիտարկել են ողջամիտ՝ կոնկրետ հարցերի քննարկման և եզրահանգման գալու համար:

Պատվիրատուն ըստ էության պարզաբանման առումով ունի իր պատկերացումները և հարցադրման համար պարզաբանում տալու իր սահմանած կարգը: Նրա դիրքորոշումը կայանում է հետևյալում, թեև՝ օրենսդիրը ժամկետ է սահմանել պարզաբանման համար, սակայն դա շատ կարճ ժամանակ է, ուստի՝ պարզաբանում չի տրամադրվի և գնման ընթացակարգը կիրականացվի օրենքի կոպտագույն խախտմամբ:

Պատվիրատուի կողմից օրենքով չառաջնորդվելու արդյունքում խախտվել է «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

«ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ն 05.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով ներկայացրել է հետևյալ պահանջը՝

- Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով արգելել կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ, այն է՝ չանցկացնել գնումների գործընթաց և պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշում՝ ներկայացված հարցադրման առնչությամբ:

«ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ն 11.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է 05.12.2018թ. Բողոքով ներկայացված պահանջի հստակեցում, այն է՝ պարտավորեցնել պատվիրատուին չկայացած համարել ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգը:

Ի լրումն 05.12.2018թ. ներկայացված բողոքի՝ «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ն 12.12.2018թ. գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/120 քննարկվող բողոքի առնչությամբ պատվիրատու Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի (հետայսու՝ նաև պատվիրատու) ներկայացրած դիրքորոշման ուսումնասիրման արդյունքում արձանագրում ենք, որ այն զարգացվել է փաստերի այլափոխման ուղղությամբ, ինչպես նաև՝ դիրքորոշման երրորդ բաժնով ներկայացրած տեսակետը վերաբերում է մրցույթը հաղթելուց հետո կազմակերպվող գործընթացին:

Պատվիրատուի կողմից հրավերի վերաբերյալ պարզբանում ստանալու նպատակով բողոքաբերը հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է հարցում: Այն, որ հարցադրումը ներկայացվել է պարզաբանում ստանալու համար «Գնումների մասին» ՀՀ օրենքով (հետայսու՝ օրենք) և պատվիրատուի հրավերով սահմանված ժամկետում՝ բողոքով ներկայացված վեճի առարկան չի հանդիսանում:

Բողոքով ներկայացված վեճի առարկան է հանդիսացել պատվիրատուի կողմից ըստ էության, բովանդակային առումով վերաբերելի, հարցադրմանը վերաբերող վերլուծության ակնկալիքով պարզաբանում չտրամադելը:

Պատվիրատուն բողոքի քննարկման ժամանակ ներկայացրած իր դիրքորոշմամբ հայտնել է տեսակետներ, որոնք չեն համապատասխանում օբյեկտիվ իրականությանը: Պատվիրատուն միտումնավոր կերպով սխալ է ներկայացնում այն, որ բողոքաբերը սխալ բովանդակությամբ նյութ է տրամադրել բողոքը քննող անձին, մինչդեռ՝ պատվիրատուի պատասխանը բարձրաձայն ընթերցվել է բողոքի քննության ընթացքում, բացի այդ, armeps.am կայքից նախապես տպագրված օրինակը բողոքին կից ներկայացվել էր:

Պատվիրատուի այն տեսակետը, որ բողոքաբերն ամբողջական տեղեկություն չի ներկայացրել, դա իր սուբյեկտիվ պատկերացումն է և ներկայացված բողոքի, փաստերի և ապացույցների տրոհված ընկալումը. մինչդեռ՝ բողոքաբերն ամբողջական տեղեկությունը ներկայացրել է բողոքով, կից ներկայացված նյութերով և բողոքի քննարկման համար հրավիրված նիստով:

Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է օրենքի նպատակը, սկզբունքները և գործողության ոլորտը: Եթե ոլորտը կարգավորող օրենքի սկզբունքները խախտվում են, լիազոր մարմինը չի ղեկավարվում այդ սկզբունքներով, շրջանցում է դրանք, իսկ օրենքի նպատակը չի իրականացվում, ապա չենք կարող գնահատել, որ լիազոր մարմնի կողմից իրականացվող գործընթացը կայացվել է օրինական և կարող է առաջացնել իրավական հետևանք: Մինչդեռ՝ պատվիրատուն ունի այն դիրքորոշումը, որ օրենքի 3-րդ հոդվածը չի կարող հանդիսանալ բողոքի իրավական հիմք:

Պատվիրատուն ներկայացված բողոքի վերաբերյալ ունի ընդգծված վերաբերմունք, թերևս այն մասով, որ մի քանի անգամ հիշատակում է, որ բողոքաբերը ներկայացրել է պարզաբանման փոփոխված տարբերակը, սակայն, ինչպես վերը նշվեց, ներկայացված նյութերից որևէ մեկի բովանդակությունը չի փոփոխվել, դրանք նաև հրապարակվել են բողոքի քննության ժամանակ, մինչդեռ՝ պատվիրատուն է բողոքաբեր ընկերությանը մեղադրում զրպարտանքի համար:

Բողոքի քննարկման ժամանակ ըստ պատվիրատուի այն տեսակետի, որ «օրենսդրությունը չի սահմանում պարզաբանման բովանդակության վերաբերյալ թույլատրելի պահանջներ», ուստի կաշկանդված չէ ցանկացած բովանդակությամբ պատասխան տրամադրելու:

Օրենսդիրը ոլորտը կարգավորող օրենքների ընդունմամբ սահմանում է իրավունքներ, պարտականություններ և գործընթացի կազմակերպման համար գործիքակազմ: Քննարկվող վիճելի հարաբերության կողմերի համար պարզաբանում պահանջելը մասնակցի իրավունքն է, իսկ այդ հարցադրման բովանդակությանը վերաբերելի պարզաբանում տրամադրելը լիազորված մարմնի պարտականությունն է: Պատվիրատուի վերոհիշյալ մոտեցումը, որպես պետական մարմնի ներկայացուցչի՝ կնշանակի շրջանցել օրենքը և իրականացնել գործընթաց, որը չի համապատասխանում Օրենքի պահանջներին:»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ՝ փաստաբան Անետա Սարգսյանը:

2. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ներյացված բողոքի վերաբերյալ 11.12.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է հետևյալ դիրքորոշումը.

«ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգը իրականացվում է (e-auction) էլեկտրոնային աճուրդի համակարգով:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուետ՝ ընթացակարգ) հրավերը հրապարակվել է՝ 28.11.2018թ.:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված՝ 05.12.2018թ. ժամը 14:00-ն:

Գնման առարկա՝ ինվազիվ և սրտաբանական ապրանքատեսակներ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ժամկետում՝ 01.12.2018թ. (ոչ աշխատանքային օր), «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հարցում ընթացակարգի հրավերով սահմանված 5-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների վերաբերյալ: Հարցադրման բովանդակություն՝ «Medtronic» անվանումով ապրանքատեսակի ամբողջական տեխնիկական բնութագրի համարժեքության գնահատման տրամադրում ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

E-auction համակարգով մասնակիցներին պարզաբանում տրամադրելու սահմանված վերջնաժամկետ՝ 04.12.2018թ. ժամը՝ 14:00-ն:

Սահմանված ժամկետում Պատվիրատուի կողմից տրամադրվել է պարզաբանում:

Ի պատասխան «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից 05.12.2018թ. ներկայացված բողոքի, հայտնում եմ Ձեզ, որ Բողոքի պահանջն անհիմն է, որպես Բողոքի հիմնավորում ներկայացված փաստացի և իրավական հիմքերը չեն հիմնավորում տվյալ Բողոքի առարկայի պահանջը, իսկ Պատվիրատուի կողմից տրամադրված պարզաբանման բովանդակության փոփոխումը և մեկնաբանումը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից պարզաբանման առումով սեփական պատկերացումներ ունենալու մեղադրանքը, համարում եմ, որպես «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից զրպարտանք:

1. Բողոքի 1.8 կետով նշվում է՝ հարցադրման վերաբերյալ Պատվիրատուն տվել է պատասխան, որն ըստ էության չի անդրադարձել հարցադրմանը:

Պատվիրատուի կողմից e-auction համակարգով, հարցումը կատարած մասնակցին ներկայացվել է պարզաբանում՝ ներկայացված հարցադրման վերաբերյալ, որը սահմանված կարգով և սահմանված ժամկետում հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և հասանելի է բոլոր հնարավոր մասնակիցներին:

2. Որպես Բողոքի փաստացի և իրավական հիմք՝ մասնակիցը ներկայացնում է գնումների մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, որը չի կարգավորում էլեկտրոնային աճուրդի անցկացման պայմանները:

3. Որպես Բողոքի փաստացի և իրավական հիմք, մասնակիցը ներկայացնում է գնումների մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ կետը, որով սահմանվում են հրավերում փոփոխություններ կատարելու կարգը, սակայն նույն բողոքով չի պահանջվում պարտավորեցնել Պատվիրատուին հրավերում կատարելու որևէ փոփոխություն:

4. Որպես Բողոքի փաստացի և իրավական հիմք, մասնակցի կողմից ներկայացված գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2-րդ մասի 1-ին կետերը ոչ մի կերպ չեն հիմնավորում մասնակցի բողոքի առարկան:

5. Բացի վերոնշյալ հիմքերից, որոնցով չի արձանագրվում Պատվիրատուի կողմից որևէ խախտում, մասնակիցը ներկայացրել է Պատվիրատուի կողմից տրամադրված պարզաբանման տեքստի իր մեկնաբանությունը:

Բողոքի մերժման իրավական հիմքերը՝

Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնումների մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության համաձայն՝

Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝ ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

Համաձայն ՀՀ կառավարության 534-Ն որոշման 11-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության՝

Առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև՝

ա. իր կողմից հաստատված ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

Համաձայն ՀՀ կառավարության 534-Ն որոշման 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

ՀՀ կառավարության 534-Ն որոշման 22-րդ կետի համաձայն՝

Սույն կարգի 19-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի

նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետը սահմանում է՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ նույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն, որը ներառում է նաև՝ հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.13 կետը սահմանում է՝

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը համակարգը ավտոմատ եղանակող միաժամանակ ուղարկում է գնահատող հանձնաժողովի անդամներին և քարտուղարին: Միաժամանակ Քարտուղարը համակարգի միջոցով հանձնաժողովի անդամներին ուղարկում է կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը ստացվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանքի տեխնիկական բնութագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման՝ 22-րդ կետի, ինչպես նաև ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով ընթացակարգի հրավերի 7.16-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝

Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման՝ 15-րդ կետի համաձայն՝

Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան:

Վերոնշյալ հիմքերը անհնարին են դարձնում «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի ներկայացված բողոքի իրավաչափությունը, հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝

1. Հարցումը կատարած անձին ներկայացվել է պարզաբանում, որը սահմանված ժամկետում հրապարակվել է տեղեկագրում՝ հրապարակված է 2018-12-04 14:55:46-ից անժամկետ:

2. Մասնակիցը ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքատեսակի ամբողջական տեխնիկական բնութագիրը, ապրանքային նշանը և արտադրողի երկիրը՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո:

3. Գնման առարկայի ամբողջական տեխնիկական բնութագրի գնահատումը իրականացվում է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստում:

4. Գնման առարկայի ամբողջական տեխնիկական բնութագրի գնահատման իրավասությունը տրված է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, քանի որ գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան:

5. Գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի գնահատման իրավասությունը առաջանում է ընթացակարգի քարտուղարի կողմից միայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի փաստաթղթերը, այդ թվում նաև տեխնիկական բնութագրերը, հանձնաժողովին տրամադրելու օրվանից:

6. Հանձնաժողովի կողմից տեխնիկական բնութագրերի գնահատման համար սահմանված ժամկետը՝ մինչև 10 աշխատանքային օր է:

Ստացվում է, որ մասնակիցը օգտվելով իրեն ընձեռնված հնարավորությունից, ներկայացնում է գնման առարկայի ամբողջական տեխնիկական բնութագրերը, և պահանջում է Պատվիրատուից գնահատել իր տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին՝ դեռևս չհանդիսանալով սույն ընթացակարգին բավարար հայտ ներկայացրած և առաջին տեղ զբաղեցրած

մասնակից: Նման մեթոդաբանությամբ մասնակիցները կարող են հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց երեք օրացույցային օր առաջ ներկայացնել իրենց ամբողջական հայտը՝ մասնագիտական փորձառություն, տեխնիկական բնութագրեր, տեղեկանք հարկային մարմիններից, գնային առաջարկ և այլն, և պահանջել Պատվիրատուներից՝ տալու պարզաբանում՝ արդյոք իրենք կճանաչվեն ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած և հետագայում՝ ընտրված մասնակիցներ:

Ի լրումն 11.12.2018թ. գրությամբ ներկայացված դիրքորոշման «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 13.12.2018թ. ներկայացրել է լրացուցիչ հիմնավորումներ.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումների օրենսդրությունը չի սահմանում թույլատրելի պահանջներ ո՛չ հարցման, ո՛չ պարզաբանման բովանդակության վերաբերյալ՝ արձանագրում ենք, որ Պատվիրատուն սահմանված կարգով և ժամկետում հարցումը կատարած Մասնակցին տրամադրել է պարզաբանում, որը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Գտնում ենք, որ մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը որևէ հնարավոր մասնակցի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը, ներառյալ տեխնիկական բնութագրի համարժեքությունը գնահատելը խախտում է այլ հնարավոր մասնակիցների ընթացակարգին մասնակցելու իրավահավասարության սկզբունքը, որն ամրագրված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության դրույթներով:»

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ լիազորված ներկայացուցիչներ Ռուբեն Եգանյանը, Տատյանա Միրզոյանը և Մերի Կարապետյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/120 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից 05.12.2018թ. ներկայացված բողոքը և 12.12.2018թ. Բողոքին ի լրումն ներկայացված գրավոր դիրքորոշումը, և կից փաստաթղթերը, ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական

բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից 11.12.2018թ. և 13.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումները.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար պետական պատվերով ստենտավորման ծառայությունների մատուցման նպատակով ձեռքբերվող բժշկական նշանակության ապրանքների մատակարարման ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի՝

• հայտարարությունը և հրավերը gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել են 28.11.2018թ:

• հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև նույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 14:00-ն:

• հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

- 5-րդ չափաբաժնով՝ «Ուղղորդիչ կաթետեր- Արտաքին շերտը նեյլոնից է, միջին շերտը՝ երկշերտ հյուսապատված պողպատ, ներքին շերտը՝ PTFE (պոլիտետրաֆտոր էտիլեն), ռենտգենկոնտրաստ դիստալ ծայրով, որի երկարությունն է 2,5մմ: Բազմահատվածային կառուցվածք, տարբեր հատվածների ջերմաձուլում (փափուկ ծայրի, ձևավորող մասի, հիմնական մարմնի): Ծայրը փափուկ է, ճկուն և չվնասող (ատրավմատիկ): Հյուսապատման «հիբրիդ տեխնոլոգիան» ավելացնում է կաթետերի ներքին լուսանցը և աջակցում է մանիպուլյացիայի պրոցեսին: Կաթետերի պատի մետաղապատումը պողպատյա ցանցով խոչնդոտում է գործիքի ծալմանը անոթների անատոմիական ծալքերի տեղում: Կաթեթերները ունեն հավասարաչափ ներքին լուսանցք ամբողջ երկայնքով: Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկու թյուններից ուղղորդիչի ներքին լուսանցքի պահանջվող չափերն են՝ 6Fr; 7Fr; 8Fr; (8F - 0.088, 7F - 0.078, 6F 0.070): Կախված վիրահատվող հիվանդի հասակից և անոթի անատոմիական առանձնահատկու թյուններից ուղղորդիչի պահանջվող երկարություններն են՝ 55սմ, 90սմ, 95սմ, 125սմ: Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկություններից ուղղորդիչ կաթետերի ծայրի պահանջվող ձևերն են՝ JL3; JL3 SH; JL3,5; JL3,5 SH; JL3,5 ST;JL3,5 ST SH; JL4; JL4 ST; JL4 SH; JL4 ST SH; JL4,5; JL4,5 ST;JL4,5 SH; J L5; JL5 ST; JL5 SH; JL5 ST SH; JL6; JL3,5 MOD ST; JL4 MOD ST; JCL3,5; JCL 3,5 SH; JCL4; JCL4 SH; JCL4,5; JCL4,5 SH; JCL5 SH; XB3; XB3 SH; XB3,5; XB3,5 SH; XBLAD 3,5; XB4; XB4SH; XB LAD4; XB4,5; XB4,5 SH; XB LAD

4,5; AL.75; AL1; AL1ST; AL1 ST SH; AL1SH; AL 1,5; AL 1,5 ST; AL1,5 SH; AL 1,5 ST SH; AL2; AL2 ST; AL2 SH; AL2 ST SH; AL3; AL3 ST; AL3 SH; JR3,5; JR 3,5 ST; JR 3,5 SH; JR 3,5 ST SH; JR 4; JR4 ST; JR4 SH; JR4 ST SH JR 4,5 ST; JR 4,5 ST SH; JR5; JR5 ST; JR5 SH; JR 6; JR6 SH; JCR 3,5; JCR 3,5 SH; JCR 4; JCR 4 SH; SCR3,5; SCR4; XBR1; XBR2; XBR CA; 3 DRC; AR1; AR1 SH; AR2; AR2 SH; ALR1,2; ALR 1,2 SH; NR4; JFL; JFL ST; JFL LT; JFR; JFR ST; RB; SON1; CAS1; CAS2; MPA1; MPA 1 SH; MPB1; MPB1 SH; H - STICK; H - STICK SH; LCB; LCB SH; RCB; RCB SH; EGB1; EGB2; EGB3; MPC; MPD; STR; Renal Curve1(small); Renal Curve (adult); J - curve; Contralateral 1; Contralateral 2; Vertebral; CBL; HY1; H1; IM; BARBEAU; IM SH; IM VB - 1; NR4; JFL; JFL ST; JFL LT; JFR; JFR ST; RB: Ֆորմատ՝ հատ: CE MARK կամ FDA որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկու թյունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առն վազն 70% - ը: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտության վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը: Եթե առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկր ին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:»:

- 9-րդ չափաբաժնով՝ «Ախտորոշիչ կաթետեր/1- Ախտորոշիչ կաթետեր ինվազիվ պրոցեդուրաների համար: Կախված վիրահատվող հիվանդի քաշից և վիրահատվող անոթից ախտորոշիչ կաթետերի պահանջվող չափերն են՝ 5Fr, 6Fr (5Fr, 6Fr՝ 37 - 40 մլ./վրկ. անցունակությամբ): Կախված վիրահատվող անոթի առանձնահատկու թյուններից ախտորոշիչ կաթետերի պահանջվող տեսակներն են՝ AL - 1, AL - 2, AL - 3, AR - 1, AR - 2, AR - 3, AR - JP, JL3 .5, JL - 4.0, JL - 4.0, JL - 5.0, JR 3.5, JR - 4.0, JR - 5.0, MP - 2.5, MP - 3.0, MP - 3.5, MP - 4.0, ST, IM, IM - Round tip, IM - Short tip, IM - JP type, BP - JL, BP - JR, , PIG, PIG - Small, PIG - 145°, PIG - 155°, PIG - Round 155°, BLK - 4.0, Tiger տեսակի՝ ունիվերսալ, սրտի աջ և ձախ անա թների ճյուղերի համար՝ ռադիալ և ֆեմորալ մոտեցման դեպքերում: Ֆորմատ՝ հատ: CE MARK կամ FDA որակի վկայականների առկայութ յունը պարտադիր է: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվ ազն 70%-ը: Պատվիրատուն իրավունք ունի ըստ

անհրաժեշտությա ն վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50%-ը: Եթե առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրի ն կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը»:

- 10-րդ չափաբաժնով՝ «Ախտորոշիչ կաթետեր/2- Ախտորոշիչ կաթետեր ինվազիվ պրոցեդուրաների համար: Կախված վիրահատվող հիվանդի քաշից և վիրահատվող անոթից ախտորոշիչ կաթետերի պահանջվող չափն է՝ 4Fr (4fr-19մլ/վրկ և 23մլ/վրկ անցունակությամբ): Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկու-թյուններից ախտորոշիչ կաթետերի պահանջվող տեսակներն են՝ AL - 1, AL - 2, AL - 3, AR - 1, AR - 2, AR - 3, AR - JP, JL3.5, JL - 4.0, JL - 4.0, JL - 5.0, JR 3.5, JR - 4.0, JR - 5.0, MP - 2.5, MP - 3.0, MP - 3.5, MP - 4.0, ST, IM, IM - Round tip, IM - Short tip, IM - JP type, BP - JL, BP - JR, PIG, PIG - Small, PIG - 145°, PIG - 155°, PIG - Round 155°, Tiger տեսակի՝ ունիվերսալ, սրտի աջ և ձախ անաթների ճյուղերի համար՝ ռադիալ և ֆեմորալ մոտեցման դեպքերում: Ֆորմատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK կամ FDA որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկու թյունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահի ն պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% - ը: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտությա ն վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50% - ը: Եթե առկա են հղումներ ֆիրմային անվանմ անը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:»:

- 11-րդ չափաբաժնով՝ «Դիլատացիոն կաթետեր՝ ընդլայնվող գնդանոթով/1- Բալոն ընդլայնվող գնդանոթով, կաթետերի երկարությունը՝ոչ պակաս, քան՝ 145սմ: Բալոնը եռաթև, որը թույլ է տալիս ճնշման արագ բարձրացումը բալոնի մեջ: Մուտքի ծայրի տրամագիծը ոչ ավել, քան 0.4մմ՝ 1.25մմ-ի բալոնի դեպքում, ոչ ավել, քան 0.42մմ՝ մնացած չափերի բալոնների դեպքում: Ծածկույթը հիդրոֆիլիկ Կախված վիրահատվող անոթի անատոմիական առանձնահատկություններից կաթետերի պահանջվող չափերն են ըստ տրամագծի՝ 1.25մմ;1.5մմ; 2.0մմ ; 2.25մմ; 2.5մմ; 2.75մմ; 3.0մմ; 3.5մմ; 4.0մմ, նոմինալ ճնշումը ոչ պակաս, քան՝ 608ԿՊա, մաքսիմալ ճնշումը՝ 1.25 - ից 3.0 մմ տրամագծերի

դեպքում՝ ոչ պակաս, քան՝ 1419ԿՊա, 3.5մմ - ից 4.0մմ տրամագծի դեպքում՝ոչ պակաս, քան՝ 1216ԿՊա: Կախված անոթի վնասված մասի չափից կաթետերի պահանջվող չափերն են ըստ երկարության՝ 10մմ; 15մմ; 20մմ; 30մմ; 40մմ: Ֆոր մատ՝ հատ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK կամ FDA որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկու թյունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% - ը: Պատվ իրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտությա ն վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50% - ը: Եթե առկա են անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ ա ղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:»:

- 12-րդ չափաբաժնով՝ «Դիլատացիոն կաթետեր՝ չընդլայնվող գնդանոթով/1- Բալոն չընդլայնվող գնդանոթով, կաթետերի երկարությունը ոչ պակաս, քան՝ 145սմ: Հիդրոֆիլիկ ծածկույթով, նոմինալ ճնշումը ոչ պակաս, քան՝ 1013ԿՊա, մաքսիմալ ճնշումը՝ ոչ պակաս, քան՝ 2026ԿՊա 2.25 - ից 4.0մմ տրամագծով բալոնների համար, ոչ պակաս, քան՝ 1624ԿՊա 4.5մմ - ից 5.0մմ տրամագծով բալոնների համար: Բալոնները եռաթև են, որը թույլ է տալիս ճնշման արագ բարձրացումը բալոնի մեջ: Մուտքի ծայրի տրամ ագիծը՝ ոչ ավել, քան՝ 0.43մմ: Կախված վիրահա տվող անոթի տրամագծի չափից կաթետերի պահանջվող չափերն են ըստ տրամագծի՝ 2.25; 2.5; 2.75; 3.0; 3.25; 3.5; 4.0; 4.5; 5.0 մմ: Ֆորմատ՝ հատ: CE MARK կամ FDA որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռն արկի ձևով: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70% - ը: Պատվիրատուն իրավունք ունի ըստ անհրաժեշտությա ն վերադարձնել կամ փոխել ապրանքի չափսը այլ չափսով, եթե առկա է ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 50% - ը: Եթե առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:»:

Հանձնաժողովը՝ «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հարցմանն ի պատասխան, յուրաքանչյուր չափաբաժնի մասով հայտնել է հետևյալ նույնաբովանդական պարզաբանումը.

«Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև տեխնիկական բնութագրերը, Պատվիրատուի կողմից գնահատվում են դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում: ՀՀ գնումների մասին օրենսդրության համաձայն՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Տվյալ դեպքում Ձեր կողմից «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում հարցումը կատարվել է դեկտեմբերի 1-ին ժամը 16:26-ին: Պատվիրատուի կողմից պարզաբանում տրամադրելու վերջնաժամկետը սահմանվել է դեկտեմբերի 4-ը՝ մինչև ժամը 14:00-ն:

Վերոգրյալից պարզ երևում է, որ Պատվիրատուն պարզաբանումը ստանալու պահից պետք է կարողանա իրականացնել գործողություն, որի համար Պատվիրատուին օրենքով սահմանված կարգով տրամադրվում է տաս աշխատանքային օր: Հետևապես, Մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում տեխնիկական բնութագրերը կպահանջվեն 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում, իսկ դրանց համարժեքությունը, ինչպես նաև ֆունկցիոնալ առումով հնարավորության համարժեքության գնահատումը կիրականացվի վերոնշյալ ժամկետներում, քանի որ գնումների մասին օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաև 40-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական տեխնիկական բնութագրի համարժեքության որոշումը ժամկետի առումով անհնար է:»:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձի հայտնեց, որ Ընկերությունը Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի 5-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, չափաբաժինների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով սահմանված ժամկետում (01.12.2018թ.) Պատվիրատուին հարցում է ներկայացրել, սակայն Պատվիրատուի կողմից ներկայացվել է պատասխան, որն ըստ էության պարզաբանման հարցադրման պատասխան չի կարող հանդիսանալ: Ներկայացված պարզբանմամբ Պատվիրատուն հայտնել է, որ օրենսդրի կողմից պարզաբանման ժամկետը շատ կարճ է, հետևաբար Ընկերության կողմից ներկայացված հարցադրմանը չի կարող պատասխան տալ:

Պաատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ գնումների օրենսդրությունը չի սահմանում թույլատրելի պահանջներ ոչ հարցման և ոչ էլ պարզաբանման բովանդակության վերաբերյալ և ըստ էության Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պարզաբանում, որը սահմանված կարգով հրապարակվել է նաև պաշտոնական տեղեկագրում: Պաատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ բողոքաբերը իր ներկայացրած հարցադրմամբ պահանջել է գնահատել վերջինիս տեխնիկական բնութագրի համարժեքությունը և գտնում է, որ մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը որևէ հնարավոր մասնակցի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը, ներառյալ տեխնիկական բնութագրի համարժեքությունը գնահատելը, խախտում է այլ հնարավոր մասնակիցների ընթացակարգին մասնակցելու իրավահավասարության սկզբունքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:
- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 28-րդ հոդվածով սահմանված է հրավերի բովանդակությունը:

Նույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

Օրենքի 29-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:
- 2-րդ մասի մասի համաձայն՝ Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

Օրենքի 40-րդ հոդվածի՝ 5-րդ մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երեք օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում, որ.

- Հրավերի բովանդակությունը ներառում է գնման առարկայի բնութագրերը:
- Ընկերությունը Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի պայմանների վերաբերյալ 01.12.2018թ. Պատվիրատուին ներկայացված հարցման շրջանակներում վերջինիս խնդրել է պարզաբանել, թե համարժեք կդիտարկվե՞ն արդյոք Medtronic ֆիրմայի արտադրության ապրանքատեսակների բնութագրերը Ընթացակարգի Հրավերով պահանջվող գնման առարկաների բնութագրերին, թե՝ ոչ:
- Հանձնաժողովի կողմից Ընկերությանը ներկայացվել է պարզաբանում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը՝ Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պայմանների վերաբերյալ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին ներկայացված հարցմամբ ակնկալել է ստանալ իր կողմից առաջարկվող ապրանքատեսակների և Հրավերով սահմանված գնման առարկայի համարժեքության վերաբերյալ պարզաբանում, սակայն Հանձնաժողովի կողմից տրված պարզաբանումը ըստ էության վերաբերելի չէ կատարված հարցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 05.12.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ ԷԱՃԱՊՁԲ-2019/16-7-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը՝ 5-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, և 12-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ